ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԵՋ

ԳՅՈՒՐՋՅԱՆ Ա. Ս.

Պատմական իրողությունների հետազոտությունների շնորհիվ վաղուց ապացուցված է, որ մարդկային հասարակության շարունակական զարգացումը օրինաչափություն է: Ապացուցված է նաև այն, որ գոյատևման հետ մեկտեղ այդ օրինաչափության պահպանումը և շարունակական զարգացման ապահովումը համամարդկային նպատակներ են:

Այդ նպատակներն իրագործելու, զարգացման գործընթացներին նըպաստելու, խոչընդոտները բացահայտելու և չեզոքացնելու, այլ կերպ ասած՝ մարդկության արժանավայել ապագան կերտելու համար պահանջվում է իրականացնել գիտագործնական ընդգրկուն և համակարգային հետազոտություններ: Դրանց արդյունքների ծավալուն փորձաքննության միջոցով մարդկությունն իր համար պարզելու և ձևակերպելու է հասարակության զարգացմանն առնչվող բազմաթիվ հարցերի հիմնավոր պատասխանները: Այդ հետազոտություններում, զարգացման ներկա փուլի պատկերացումներին և պահանջներին համապատասխան, նորովի են վերանայվելու այդ հարցերի նախկին լուծումները, ցույց են տրվելու դրանց կիրառելիության դեպքերն ու պայմանները: Բացատրվելու և ուղղվելու են բացթողումներն ու սխալ մոտեցումները, գնահատվելու և օգտագործվելու են ճանաչում ստացած և գործնականում ստուգված կողմերը:

Գիտակցելով շարունակական և ինտենսիվ զարգացման կարևորությունը մարդկային հասարակության և դրա յուրաքանչյուր անդամի համար՝ միաժամանակ կարելի է պատկերացնել այն ճշգրիտ կանխատեսելու և նպատակահարմար ուղղորդելու ողջ բարդությունը:

Բնականաբար, այդ հասարակությունը ընդունելի պետք է լինի նրա յուրաքանչյուր անդամի համար, արժանի՝ զարգացած ողջ մարդկությանը: Հետևաբար, պետք է գիտենալ, թե ինչ ուղղությամբ և ինչպես կերտել այն, որ համապատասխանի այդ բնութագրիչ պահանջներին: Չէ՞ որ յուրաքանչյուր անհատ կամ մարդկանց առանձին խմբեր ևս ձգտում են երջանիկ ապագայի, սակայն ոչ միշտ է հաջողվում դրան հասնել. հաճախ հենց իրենց կողմից իրականացվող անհամարժեք գործողությունների պատճառով: Նույն ձևով, չնայած մարդկային հասարակությունն ունի բնականոն զարգացման պատմականորեն ապացուցված միտում, սակայն իր գործողություններով (պատերազմներ, բնությանը հասցված վնաս, ոչ նպատակային գործունեություն և այլն) շատ դեպքերում խոչընդոտել է դրա իրագործմանը: Ուրեմն, նախ պետք է ճիշտ ձևակերպել նպատակը: Կարծում ենք, ընդունելի տարբերակ է հետևյալ ձևակերպումը. *ապահովել մարդկային հասարակության հետագա զարգացումը, հնարավորինս հեռացնել խոչընդոտները, մեղմել դրանց ազդեցությունը, ընդլայնել գիտակցված գործունեության մասշտաբները, ձևավորել բարձր գիտելիքներով օժտված հասարակություն:* Այս նպատակը հաջողությամբ իրագործե-

լու համար պետք է գիտենալ՝ ինչը, ինչու, ինչպես և երբ անել, ձևավորել այդ ապագան կերտելու ալգորիթմը: Անհրաժեշտ է ունենալ այն իրականացնելու հետ կապված հարցերի հիմնավորված պատասխանները, մանրամասնել յուրաքանչյուր նախատեսվող քայլը, կանխատեսել իրականացման դեպքում սպասվելիք հետևանքները, գնահատել դրանց ազդեցությունը հասարակության և առանձին անհատների վրա: Եվ, առաջին հերթին, պետք է հավաստիորեն բացահայտել այն պատճառներն ու գործոնները, որոնք մարդկային հասարակության զարգացման հիմքում են ընկած, որպեսզի դրանց նպատակային և պատշաճ օգտագործումով ու կառավարումով հնարավոր լինի հասնել ցանկալի հասարակության ձևավորմանը, մշակել այն միջոցառումները, որոնք կապահովեն այդ անցման գործընթացների արդյունավետ իրականացումը:

Մարդը՝ որպես մտածող էակ, իր գոյատևման համար ոչ միայն օգտվում է բնության բարիքներից, հարմարվում է կենսամիջավայրին, այլև ձգտում է իր պահանջմունքներին հարմարեցնել այն, դրանց ինչ-որ մասը բավարարել նաև իր ստեղծած բարիքների հաշվին: Օգտագործելով իր բնածին ընդունակությունները և գիտակցված գործելու կարողությունն ու հնարավորությունը՝ նա ձգտում է ճանաչել իրեն, իր միջավայրը, հետազոտել հասարակությունը, որի մեջ ապրում է ինքը, ձևակերպել դրա գոյատևման ու զարգացման օրինաչափությունները: Յուրացնում և կիրառում է այն ամենը, ինչը բացահայտվել, ընդունվել և պահպանվել է իր նախնիների կողմից, և ստեղծում է նորը: Ձևավորում ու հարստացնում է իր գործունեության գիտելիքային հենքը:

Քանի որ մարդկային հասարակության շարունակական զարգացման հիմքը գիտակցված գործունեություն իրականացնելու մարդու բնածին հնարավորությունն ու այն գործնականում կիրառելու կարողությունն են, ուստի զարգացման միտումը պահպանելու և ցանկալի հունով տանելու համար պետք է հասարակությունում անհրաժեշտ պայմաններ ստեղծել գիտակցված գործունեություն ծավալելու և դրանում հասարակության կարող անդամների հնարավոր լայն մասնակցությունը ապահովելու համար:

Մարդկային գործունեությունը կամ նույնիսկ առանձին գործողությունը գիտակցված կարող է համարվել, եթե այն նպատակային է, գիտելիքահենք, իրականացվում է հնարավոր բարձր արդյունավետությամբ: Այս ամենը իրողություն դարձնելու համար գործունեությունը պետք է կառավարվող լինի: Եթե գործունեությունը չի բավարարում այս պահանջները, ապա այն գիտակցված չէ, իսկ իրականացնողը գիտակից համարվել չի կարող: Այս եզրահանգումից շեղումներ պայմանավորող պատճառները կարող են լինել տարբեր: Դրանց ի հայտ գալու հնարավորությունը պետք է նախապես բացահայտվի ու գնահատվի, ապա և կիրառվեն դրանց ազդեցությունը չեզոքացնող կամ մեղմող համապատասխան միջոցառումներ: Պետք է հաշվի առնել, որ նշված պայմանները գործում են նաև գիտակցված գործունեությանը ներկայացվող պահանջների համար: Այսպես, նպատակայնությունը կամ նպատակադրումը կարող են գիտակցված լինել կամ համարվել գիտակցված գործունեության անհրաժեշտ պայման, եթե նպատակային են, իրականացվում են հնարավոր

բարձր արդյունավետությամբ և կառավարելի են: Նույն ձևով նաև՝ կառավարումը: Նույնանման կլինեն գիտակցված գործունեության նաև մյուս երկու պայմանների՝ գիտելիքահենքության և արդյունավետության բնութագրումները:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ չնայած կերտվող հասարակությունում կարևոր տեղը պատկանում է գիտելիքին և դրա վրա հիմնված գործողություններին, այդուամենայնիվ, հիմնական գործոնը գիտակցված գործունեության իրականացումն է, որն էլ ապահովում է մարդկային հասարակության և նրա անդամների զարգացումը: Դրա պայմանների կանոնակարգման միջոցով զարգացմանը կարելի է տալ ցանկալի ուղղություն և հնարավոր բարձր կամ նպատակահարմար արդյունավետություն՝ իհարկե, ապահովելով գիտակցված գործունեությանը ներկայացվող պահանջները, այսինքն՝ նպատակային, գիտելիքների վրա հիմնված, արդյունավետ և կառավարվող լինելը: Ուստի արդարացի կլիներ կերտվող հասարակությունն անվանել ոչ թե *գիտելիքների* կամ *գիտելիքային (knowledge society)*, թեկուզ և նույն նպատակին միտված *(collaborative*), այլ *բարձր գիտելիքների վրա հիմնված գործունեության հասարակություն*: Դրանում միաժամանակ շեշտադրվում է նաև գիտելիքի պահանջվող բնութագիրը՝ մարդկային գործունեության հիմքում ոչ թե ցանկացած տիպի, այլ միայն *բարձր գիտելիք* դնելու անհրաժեշտությունը: Այս հավելումը հուշում է, որ հասարակությունը ձևավորելու ծրագրերի ու նախագծերի մշակման ժամանակ պետք է հաշվի առնել *գիտելիքային անվտանգության* խնդիրը, նկատի ունենալ *գիտելիքային* ռիսկի հնարավորությունը և նախատեսել դրանց նպատակային կարգավորմանն ուղղված միջոցառումներ:

Կարծում ենք՝ առաջարկված անվանումով ձևավորվող հասարակության համար, ելնելով դրան վերը տրված բնութագրումից, ընդունելի կլինի հետևյալ հարացույց-բացատրությունը՝ այն ներկայացնել որպես *նպատակային-գիտելիքահենք և արդյունավետ-կառավարվող, հասարակության և անհատների շահերին չհակասող գիտակցված գործունեության հասարակություն*: Իհարկե, կարելի է կիրառել նաև *գիտելիքի հասարակություն* անվանումը: Սակայն այն գործածելիս հարկ է նկատի առնել նաև վերը տրված բացատրությունները: Հակառակ դեպքում սխալ կընկալվի կերտվող հասարակության հիմնարար բնութագիրը՝ գիտակցված գործունեության անհրաժեշտությունը և մարդկային հասարակության զարգացման գործում դրա դերն ու կարևորությունը:

Մարդկային հասարակության զարգացման տնտեսական հիմքի՝ վերը տրված բացատրությունը, կարծում ենք, ազդեցություն կունենա նաև նպատակադրվող հասարակության բնութագրերի ձևակերպման, դրան անցնելու ծրագրային մոտեցումների և հետազոտության ուղղությունների վրա: Այդ առումով անհրաժեշտ է նորովի դիտարկել և պարզաբանել հասարակության զարգացմանն առնչվող մի շարք հարցեր: Դրանց մեջ, մեր կարծիքով, առավել կարևորվում են ստորև թվարկվածները.

1. Կապիտալը բացառապես ընկալվելու է որպես մարդկային գիտակցված գործունեություն իրականացնելու միջոց կամ միջոցների հա-

մալիր, որն օգտագործվում է աշխատանք կատարելու, պահանջարկ ունեցող բարիքներ արտադրելու և ավելացված արժեք ստեղծելու համար: Կապիտալը ձևավորվում է ներդրումների միջոցով: Քանի որ արդյունքների նկատմամբ պահանջարկը շարունակական է, ուստի դրանք ստեղծելու գործընթացը ևս շարունակական պետք է լինի, որն առաջադրում է կապիտալի պահպանման պահանջը: Վերջինն էլ, իր հերթին, պայմանավորում է կապիտալի շարունակական վերարտադրությունը և այդ նպատակին ծառայող ներդրումներ կատարելը: Այս մոտեցման հիմքի վրա պետք է կատարվի կապիտալի ստեղծման, օգտագործման և պահպանման ծախսումների հաշվառումը ստեղծվող արդյունքի արժեքում:

2. Կապիտալի կազմում առանձնակի կարևորություն է ձեռք բերում մարդկային կապիտալը (ՄԿ): Դա բացատրվում է ինչպես ՄԿ-ի ձևավորման և օգտագործման յուրահատկություններով, տարածվածությամբ (առկա և ամենուր), այնտեղ, որտեղ տեղաբաշխված է բնակչությունը, այնպես և ընդհանուր կապիտալի կազմում մտավոր կապիտալի առաջնայնությամբ, որի կրողը մարդն է: Այս հատկությունները մեծապես կարևորվում են բնական քիչ հարստություններ ունեցող և փոքր տարած-քով երկրների համար, ինչպիսին է նաև Հայաստանի Հանրապետությունը: Դրանցում առաջնայնությունը տրվում է գործունեության գիտատար ճյուղերի զարգացմանը, այդ թվում և գիտելիքի ստեղծմանը, ինչը պաշտոնապես հավաստագրված է ՀՀ-ում:

3. Գիտելիքահենք կառավարումը համընդհանուր գործունեություն է, կիրառվելու է ցանկացած պարագայում և ծառայելու է գործունեու- թյան բարձր արդյունավետություն ապահովելու նպատակին: Այն, ըստ գիտակցված գործունեությանը (ինչպիսին նաև կառավարումն է) առաջադրված պահանջների, պետք է լինի նպատակային, գիտելիքահենք, արդյունավետ և կառավարվող: Դրա կարևոր գործառույթներն են լինելու նաև գործունեության գնահատումը, կանխատեսումների մշակումը, նախատեսվող միջոցառումների իրականացման հնարավոր բոլոր հետևանք-ների որոշումը և այլն: Այս բոլորի համար պահանջվում են կառավարման առաջավոր տեխնոլոգիաների մշակում և կիրառում, որոնց գործուն մասնակցություն է ցուցաբերելու նաև կառավարող մարմնի անձնակազմը:

4. Հասարակության զարգացումը, դրան նպատակաուղղված միջոցառումների իրականացումը նպաստավոր պետք է լինեն ինչպես ամբողջ հասարակության, այնպես էլ նրա յուրաքանչյուր անդամի համար: Ուստի անհրաժեշտ է դառնում դրանց շահերի փոխհամաձայնեցումը: Կարծում ենք՝ այդ գործընթացը սկսվելու է մակրոմակարդակից՝ փոխհամաձայնեցումը իրականացնելով ըստ հասարակության մակարդակների և յուրա-քանչյուր մակարդակում առկա սուբյեկտների միջև (ուղղաձիգ և հորիզոնական փոխհամաձայնեցում), ինչը պահանջում է համապատասխան մեթոդական մոտեցում և նպատակ ունի զարգացման միջոցառումների արդյունքները հասցեական ու կոնկրետ դարձնել:

5. Այժմ աշխարհում ընթացող գլոբալ գործընթացները զգալի ազդեցություն են ունենում երկրների զարգացման բնութագրերի վրա, ընդ որում՝ ինչպես դրական, այնպես էլ բացասական առումով: Մարդկությունը գլոբալացման հետևանքով աստիճա-նաբար գնում է դեպի միավորված

հասարակության ձևավորում: Ուստի, այն դիտարկելով որպես ամբողջություն, անհրաժեշտ է գլոբալացման գործընթացների համաշխարհային կանոնակարգում, դրա միջոցով տարբեր տարածաշրջանների կամ երկրների շահերի հաշվառում և միջոցառումների ուղղաձիգ և հորիզոնական փոխհամաձայնեցում: Ցավոք, այդ ամենը դեռևս անբավարար չափերով է կատարվում, սակայն դրանց կարևորությունը, կարծում ենք՝ ակնհայտ է:

6. Թվարկված հարցերը համակարգային են, ներհյուսված, ներառում են ապագա հասարակության էության և դրան անցման ուղիների ամբողջական համալիրը: Դրանք լուծելու համար, ինչպես նշեցինք, անհրաժեշտ է մեծածավալ հետազոտությունների իրականացում:

ФАКТОР ЗНАНИЙ В РАЗВИТИИ ОБЩЕСТВА

ГЮРДЖЯН А. С.

Резюме

Развитие человеческого общества является закономерностью.

Глобальная цель человечества заключается в сохранении именно этой закономерности.

Во имя осуществления этой цели и созидания достойного будущего человечества необходимо провести всеобъемлющие и системные научно-практические исследования. В соответствии с требованиями нынешнего этапа развития в этих исследованиях должны быть пересмотрены имевшие место ошибочные подходы, восполнены упущения, оценены и использованы факторы, проверенные практикой и получившие признание.